




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

378610 ՍԵՎԱՆ ՆԱԻՐՅԱՆ 164

 2-63-44

« 01 » 09 2009 թ.

ՈՒՂԵՐԶ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո նախագահ

Սևան համայնքի առկա վիճակի և հեռանկարի նկատմամբ լուրջ մտահոգությամբ հարկադրված դիմում ենք Ձեզ, քանի որ մեզ համար գերխնդիր է դարձել քաղաքի վարչական սահմաններում սեփական շահերի պաշտպանությունը, համայնքի հետագա գործունեության և բնականոն զարգացման ապահովումը:

ՀՀ կառավարության՝ 2005թ. հուլիսի 21-ի թիվ 1766-Ն որոշմամբ հաստատվեց Սևան քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը և «Սևան Ազգային պարկ»-ի հատուկ պահպանվող տարածքներից 458.47հա պետական սեփականություն հանդիսացող հողամասեր ընդգրկվեցին համայնքի վարչական սահմաններում:

Սակայն, դրանից համայնքը ոչ միայն չշահեց, այլև ավելացան այդ տարածքների սաննաքրման, աղբահանության և սպասարկման հետ կապված ծախսերը:

ՀՀ ՏԻՄ օրենքի 57-րդ հոդվածի 3<sup>ա</sup> կետի համաձայն՝ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները համարվում են համայնքի բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրներից մեկը:

Նույնն է փաստում նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը / հոդված 28, 1.3<sup>ա</sup> /:

Սակայն, անտեսելով համայնքների նշված օրենքներով ամրագրված շահերը, ՀՀ կառավարության 29.06.06թ. «ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 30-ի թիվ 927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 907 որոշմամբ սահմանվել է, որ «Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրինմանը հանձնված՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի վարձակալության պայմանագրերով նախատեսված վարձավճարների տարեկան գումարի 30% է փոխանցվում համապատասխան համայնքներին:

Դրանով տուրիզմի հանրապետական գոտի համարվող Սևան քաղաքը ոչ միայն զրկվում է իր բյուջեի եկամուտների ձևավորման կարևորագույն աղբյուրից, այլև ներդաշնակ, համակողմանի զարգացման հնարավորությունից ու առաջընթացից:

Ի դեպ, 2002թ. հոկտեմբերից մինչև 2008թ.-ը մեծ ջանքերի գնով համայնքին հաջողվել է մարել նախկինից կուտակված ավելի քան 250մլն. դրամի պարտք, որը 1.6 անգամ գերազանցում էր համայնքի բյուջեի տարեկան եկամուտները:

Բնականաբար նման ծավալի պարտքերի մարման հետ անհնար էր համատեղել տարիներ շարունակ կուտակված համայնքապահպան շատ ու շատ հիմնախնդիրներ, որոնց մեծ մասը դեռևս մնում են չլուծված՝ քաղաքի ճանապարհների, մայթերի և հրապարակների ասֆալտապատ ծածկույթի վերանորոգում՝ 150մլն. դրամ, «Նոր թաղ» թաղամասը քաղաքին միացնող ճանապարհի կառուցում՝ 120.0մլն. դրամ, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում՝ 220մլն. դրամ, քաղաքի սելաֆատարների հիմնանորոգում՝ 25.0մլն. դրամ, հանրակացարանների, 2 մանկապարտեզների, երաժշտական դպրոցի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենքերի վերանորոգում՝ 190մլն. դրամ և այլն:

Մեծարգո նախագահ.

Ուստի, այս մտահոգությամբ էլ դիմում ենք Ձեզ և խնդրում Ձեր օգնությունը՝ վերանայել ՀՀ կառավարության՝ 29.06.06թ. թիվ 907-Ն որոշումը /վարձավճարների 30%-ի մասով/, համայնքին վերադարձնել իր վարչական սահմաններում պետական սեփականության հողերի վարձավճարները ամբողջությամբ զանձելու և տնօրինելու ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավունքները, որը հնարավորություն կտա լուծելու համայնքապահպան, այդ թվում նաև ավիի հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքներով՝

#### Ավագանու անդամներ՝

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԱՄՍՈՆ
3. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՍՈ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ՀՈՒՆԱՆ
6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
7. ԴԱՎՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
8. ԷԼԻՋԲԱՐՅԱՆ ԱՐԱՄ
9. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԱԿԻԶ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ
11. ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
12. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՇՈՏ
13. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱ